

Փարիզ, 28 դեկտեմբերի 2010 թ.

REF: 314/2010

Հրանուշ Հակոբյան
ՀՀ Սփյուռքի Նախարար

Մեծահարգո տիկին Հակոբյան,

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Եվրոպայի վարչության և անձամբ իմ անունից սրտանց և ջերմությամբ շնորհավորում եմ Ձեզ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով: Թող 2011 թվականը լինի առողջության, խաղաղության, նորանոր հաջողությունների, ինչպես նաև մեր համագործակցության առավել արդյունավետ զարգացման տարի:

Իր հիմնադրումից ի վեր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը պահպանել և տարածել է հայ ինքնությունը և ժառանգությունը տարբեր մշակութային և կրթական ծրագրերի միջոցով: Մեզ համար չափազանց կարևոր է Հայրենիք-Սփյուռք համագործակցության առավել հզորացումն ու զարգացումը:

Սրտանց շնորհակալություն եմ հայտնում Ձեզ Հայաստան-Սփյուռք համագործակցության զարգացման, հայապահպան գործունեության և տարբեր կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ Ձեր բոլոր ջանքերի համար:

Մաղթում եմ Ձեզ առողջություն և ուժ՝ նույնքան նվիրումով շարունակելու Ձեր գործունեությունը և առավել ամուր դարձնելու Հայաստան և Սփյուռք համագործակցությունը:

Լավագույն մաղթանքներով և հարգանքներով՝



Ալեքսի Կեօվճեան
ՀԲԸՄ Եվրոպայի Ատենապետ